ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 66
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N 7101.2/14253-16
«12» 12 2016 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լիանա Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում դասավորված են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան: Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմնվելով ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի N 755-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ցուցանիշների վրա, հաշվի առնելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում ՀՀ կառավարության կողմից բարեփոխումների իրականացման միտումներն ու առաջադրված գործողությունների ծրագիրը:

Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան, ընդ որում 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը՝ հաշվարկվել է 1200.0 հազ. դրամի չափով:

Տրանսպորտային միջոցների պահպանման հետ կապված ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երեք հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր (բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար), մեքենաների և սարքավորումների ընթացիկ

նորոգում և պահպանում, և պարտադիր վճարներ (տեխնիկական զննման վճարներ՝ 1 մեքենայի համար 6.0-10.0 հազ. դրամ և բնապահպանական վճարներ՝ 1 մեքենայի համար 2.5-3.0 հազ. դրամ): ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը ծառայողական մեքենաների պահպանման համար հատկացվել է 22467.8 հազ. դրամ՝ թվով 19 ավտոմեքենայի համար: «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (09.06.2010թ. ՀՕ-63-Ն) պահանջներից ելնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը նախատեսվել են հատկացումներ ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համապատասխան վճարներ կատարելու համար՝ ընդամենը 760.0 հազ. դրամ:

Հարգանքով՝

Բ. Հայրապետյան

Կատարող՝ Ֆինանսատնտեսագիտական վարչություն
Գ. Մեսրոպյան Հեռ. 010 317868